№ 38 Կիրակի, նոյեմբերի 27—1866. № 38.

ՎԱՃԱՌԱԿԱՆ

Թիֆլիսի առևտրական գազեթ:

Հրատարակվում է շաբաթը մէկ անգամ կէս թերթ, կիրակի օրերով: 10 ամսվայ գինը Մարտից մինչև Յունվարը քաղաքումս՝ 2 ման. 50 կոպ., դուրսը՝ 3 մանէթ:

ՇԱԲԱԹԱԿԱՆ ԹԵՐԹ
(ԱՌԱՋԻՆ ՏԱՐԻ)

Գազեթին ստորագրվել կարելի է խմբագրի մօտ:
Գազեթումը հրատարակվելու կընդունվին մասնաւոր յայտարարութիւններ: Գների մասին կարելի է իմանալ խմբագրատանը:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

«Վաճառականը» 1867 թւին: Տէրութենի կարգադրութիւնները: Ծառայողների փոփոխութիւնները: Տօրգեր: Կին ուզելու եւ աղջկանց մարդու տալու վրայ: Մեր հոգեւորականների վրայ մէկ քանի խօսք: Զանազան տեղեկութիւններ: Առեւտրական տեղեկութիւններ: Մասնաւոր յայտարարութիւններ:

„ՎԱՃԱՌԱԿԱՆԸ" 1867 ԹՒԻՆ.

Ինչպէս հրատարակել էինք „Վաճառականի" 30-դ № ումը 1867 թւին „Վաճառականը" կտպվի էնպիսի թերթերի վրայ, որ ամէնը հիմիկվան 4 կէս թերթի տեղ 5-ից մինչև 6-ը լինի իր մեծութենով: Գալ տարվան ստորագրողները կստանան ձրիաբար „Առևտրական բառարան", որի մէջ ամփոփված կլինին թէ առուտուրին վերաբերեալ գլխաւոր գործածված բառերը և թէ գլխաւոր փողերի արքանութիւնը Ռուսի փողի հետ համեմատելով: 1867 թւին „Վաճառականի" մէջ կտպվին շարունակ ամեն նումերումը „Ռուսաց տելեգրաֆի ընկերութենից" ստացած թէ առուտուրին և թէ միւս հասարակական գործերին վերաբերեալ նոր համբաւները: „Վաճառականի" գինը գալ տարի թէ քաղաքումս և թէ դուրսը կլինի 5 մ. Գալ տարի „Վաճառականը" կդուրս գայ հինգշաբթի օրերով:

Հիմիկվանից ընդունվում է գալ տարվան ստորագրութիւնը քաղաքումս՝ „Վաճառականի" խմբագրոջի և նրա գլխաւոր գործակից պ. Ա. Երիցեանցի մօտ, նմանապէս և գրավաճառ պ. Ա. Էնֆիաճեանցի գրատանը, իսկ օտար քաղաքացիները պէտք է դառնան ուղղակի „Վաճառականի" խմբագրողին էս հասցէով՝ „Վաճառականի" խմբագրող Գէորգ Տէր-Աղէքսանդրեանցին Թիֆլիսումը", իսկ Ռուսերէն՝ „Редактору Тифлисскаго Торговаго листка Егору Тер-Александрову въ Тифлисѣ".

Խնդրում ենք 1867 թւի մեր գազեթին ստորագրվել ցանկացողներից, որ նրանք յայտնեն իրանց ցանկութիւնը մեզ մինչև էս տարվան նոյեմբերի վերջը, որ կարողանանք ստորագրվողների թւի համեմատ կարգադրութիւն անել գալ տարվան համար:

ՏԷՐՈՒԹԵՆԻ ԿԱՐԳԱԴՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ.

ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ՓՈՓՈԽՈՒԹԻՒՆՆԵՐԸ:

Բաքուի գաւառի պահապան զօրքի դիստանցիայի գլխաւոր պրապորշչիկ ԱՎՇԱՐԵԱՆՑԸ արձակվեցաւ էդ պաշտօնից՝ Կովկասեան Լինեյնի № 20-դ բատալիօնումը ծառայելու նշանակվելու պատճառով, 1866 թւի նոյեմբերի 1-ին.

Պրապորշչիկ Սարգիս-Բէկ ԴԱՆԻԷԼԲԵԿԵԱՆՑԸ նշանակվեցաւ Բաքուի գաւառի պահապան զօրքի դիստանցիայի գլխաւոր, 1866 թ. նոյեմբերի 11-ին.

Օրդուբադի նախակրթական ուսումնարանի պատուաւոր վերատեսուչ Մելքոն ԱԹԱԲԵԳԵԱՆՑԸ հաստատվեցաւ Նուխու նահանգական ուսումնարանի պատուաւոր վերատեսչի պաշտօնի մէջ, 1866 թ. նոյեմբերի 11-ին.

ԿԻՆ ՈՒԶԵԼՈՒ ԵՒ ԱՂՋԿԱՆՑ ՄԱՐԴՈՒ ՏԱԼՈՒ ՎՐԱՅ.

Կին ուզելը տղամարդու համար և մարդու գնալը աղջկանց համար մարդութենի էնպիսի մէկ պահանջմունք է, որ կնիկ չունեցող տղերքը և անմարդ աղջկերքը մէկ բացառութիւն են կազմում ընդհանուր կանոնից: Բնական ընդհանուր մարդկութենի կանոնը անխախտ պէտք է մնար, բայց ինչ անես, որ զանազան պատճառներով (հիմնաւոր, թէ անհիմն) մէկ կարգ մարդիկը անկին են մնում:

Մեծ բնական պահանջմունք լինելով տղամարդու համար կին ուզելը և աղջկայ համար մարդու գնալը, դառել է դա մի և նոյն ժամանակը երկուսի համար էլ մեծ պարտականութիւն: Մարդը անկին և կինը անմարդ կասես թէ մէկ անբնական բան է: Մարդը աշխատում է և կինը տանը պատրաստում է իր մարդու դատած փողերով բոլոր

հարկաւոր բաները, որ երկուսը միասին վայելեն և էդպիսով քաղցրացնում է երկուսի աշխատանքն էլ:

Ամեն բնական պահանջմունք անկանոն գործ դնելուցը խանգարվում է և դէպ ի չարն է տանում բնութենի ընդդէմ վարվողին:

Կարծիք չկայ, որ ընդդէմ է բնութենին տղամարդու 40 և 50 տարեկան ժամանակը կին ուզելը և աղջկայ 30 և 40 տարեկան ժամանակը մարդու գնալը: Բայց ի՞նչ անես, որ մեզանում մանաւանդ հարուստ տների տղամարդիկը երկար ժամանակ անկին են մնում, թէ ի՞նչ է, որ աւելի և աւելի շատացնեն իրանց ունեցած հարստութիւնները, որ աւելի բարձր տեղից մեծ փողով և բաժնքով աղջիկ ուզեն: Աւելի լեղի ժողովուրդը և ժողովրդի միջին կարգը չեն ուշք դնում էս բանին և մեծ մասով իր ժամանակին են կին ուզում:

Ասում ենք իր ժամանակին, բայց թէ ո՞րն է իր ժամանակը: Դժուար է կարելի խօսք ասել էսդուր մասին, որովհետև ամեն տեղ էլ բնութիւնը մէկ չէ և հիւսիսային ցուրտ երկրումն ու հարաւային շոգ կողմերումը մէկ կերպով չեն զարգանում մարդիկը: Հիւսիսային կողմերումը 25 տարեկան աղջիկը դեռ նոր մարդու տալու է կոչվում, իսկ հարաւային կողմերումը 30 և 35 տարեկան կանայքը պառաւի հաշումն են: Մեր երկրի համար միջին հաշով վեր առնելով կարող ենք ասել, որ աղամարդը պէտք է կին ուզելիս լինի 22-ից մինչև 26 տարեկան, իսկ աղջիկը մարդու գնալիս 16-ից մինչև 20 տարեկան:

Ինչպէս շատ մեծ հասակով տղամարդու համար անյարմար է կին ուզելը, աւելի անյարմար և վնասակար է շատ ջահիլ ժամանակը կին ուզել. օրինակ 14 և 15 տարեկան ժամանակները, երբ դեռ մարդու մարմինը չէ ստացել իր կատարեալ ձևակերպութիւնը:

Ասացինք որ մեր ջահիլները առհասարակ իր ժամանակին կին չեն ուզում, ապասում են որ իրանց գլխին աւելի մեծանայ: Շատ լաւ կլինի, եթէ բնութիւնն էլ ապասում լինի և չլինի ստիպում մարդուն իր պահանջմունքը կատարելու: Բնութենին ընդդիմանալ չեն կարողանում մարդիկ և անկարելի էլ է էդ բանը, քանի որ նրանք մարդ են կոչվում: Փոխանակ իր ժամանակին կանոնաւոր կին ուզելու, անկանոն ճանապարհով մանդալով են անցկացնում իրանց ժամանակը և էդուրից է, որ ծագում են զանազան հիւանդութիւններ, սարսափելի ցաւակարութիւններ տղամարդկանց համար, իսկ աղջկերքն էլ էդպիսի մարդկանց վարմունքով նըմանապէս կորցնում են իրանց զուարթութիւնը, տարիները անց կենալով:

Էդպիսի տղամարդիկը չեն մոռանում, որ իրանց մարմինը ցաւակարելով և նրանից յետոյ կին ուզելով, պէտք է իրանց ողջ սերունդը ցաւակարեն: Մի թէ սարսափելի բան չպէտք է լինի հօր համար՝ իր նոր ծնած որդուն իր ցաւերով ցաւակարված տեսնելով:

Իսկ անկանոն ճանապարհներին մանդալով ջահիլների չափանալու և ցաւակարվելու համար հարկաւոր է նրանց իր ժամանակին կին ուզելը, ինչպէս ասացինք 22 տարեկան հասակից մինչև 26 տարեկան հասակը: Մինչև 26 տարին մարդ եթէ շնորհք ունի, բոլորը կերևի և կարող է գործ էլ դնել: Ի հարկէ անկանոն բան կլինի ամեն տղամարդուն սպասելու, որ հաղար հաղար թումաններով տէր դառնայ և յետոյ կին ուզէ: Ճարեցիր մէկ տեսակ ապրուստ, բաւական ապահովեցիր քեզ, կարող ես և պէտք է կին ուզես, էսպասելով, որ էս տարի քեզ 500 թուման կտան,, իսկ 5 և 6 տարուց յետոյ 1000 թուման: Ինչքան առողջութիւն կկորցնես էդ 5 և 6 տարումը, էնքան չի կարող լինել կնոջեցդ քեզ աւելացած փողը:

Ամէն կին ուզելիս տղամարդը գլխաւորապէս պէտք է ուշք դարձնէ, առաջի հարկէ իր առողջութենին և երկրորդ որ իր կնկացուն էլ նմանապէս առողջ լինի, բոլորովին անցաւակար, որ որդիքն էլ մի և նոյն ցաւերով չծնվին աշխարհ և թոյլ ու նուազ մարդկանցով չլցվի մեր երկիրը: Մարմնով թոյլ ու նուազ և հիւանդոտ մարդիկը, կարծիք չկայ, որ էդպիսի են նմանապէս և խելքով:

Մեծ ուշք պէտք է դարձնէ ծնողը իր մարդու տալու աղջկան, որ չլինի թէ նրանց հիւանդոտ հիւանդոտ մարդու տայ: Ցաւակար աղջկան մարդու տվողը հոգով պարտական է մնալու իր ցաւակար թոռների առաջ և նմանապէս իր փեսայի առաջ, որի վրայ նմանապէս վատ ազդեցութիւն կարող է ունենալ իր կնոջ ցաւակարութիւնը:

Շատ դժուար է մեզանում տղամարդու համար իր կնկացուի ցաւակարութենի իմանալը, որովհետև մեզանում առհասարակ իր կնկացուին տղամարդը չէ կարողանում լաւ տեսնել, իմանալ, ծանօթանալ նրա հետ, խօսիլ, նստել, վեր կենալ նրա հետ և իմանալ նրա վարքը, բարքը և խելքը: Ասում են մեզանում, թէ իբր նշանելու աղջկայ մօտ չի կարելի աղամարդու մօտ թողնելը, աղջկայ անունը կկոտրվի, եթէ էն տղամարդը հրաժարվի նրա ուզելուց: Անուն կոտրվելը դարտակ բան է, որովհետև շատ դարտակ պատճառով կարող էր չուզել նրան տղամարդը: Մէկ փոքր բան էր դուր գալ նրան և էդ պատճառով չէ ուզում նրան, յետոյ մէկ միւս տղամարդ կարող է լոյս ընկնել, որին աղջկայ էն փոքր պակասութիւնը (մարմնաւորն ի հարկէ) մեծ արժանաւորութիւն թվի:

Ուրիշ երկիրներումն առհասարակ էնպէս է, որ տղան ու աղջիկը մինչև պսակվելը լաւ ծանօթանում են միմեանց հետ: Լաւ ծանօթացած աւելի քիչ կկասվին երկու կողմերն էլ, քան թէ հիմի, երբ տղան էլ ու աղջիկն էլ միջի մարդկանց բերանով են խօսում միմեանց հետ մինչև պսակվելը: Թէ քանի՞ տարաբաղդ պսակներ են լինում մեզանում էդուրից, հաշիւ չկայ. և մեծ փող

թաղելիս նրանց կարողութեանի համեմատ նուէրներ ժողովել և էդ բոլոր փողերը նմանապէս հոգևորականների ռոճիկին աւելացնել: Էդ նուէրների ժողովելու կարգադրութիւնը և գանձապետութիւնը կարող են անել մեզանում կոնսիստորիաները և հոգևոր կառավարութիւնները:

Էդ երկու աղբիւրից մեծ գումարներ կժողովվի և կնշանակվի հոգևորականներին: Էնպէս որ, ինչպէս մենք կարծում ենք, շատ հեշտ կլինի էն ժամանակը մեր աւագ քահանաներին տարեկան նշանակել 2000 մ., հասարակ քահանաներին՝ 1500 մ., սարկաւագներին՝ 600 մ. և դպիրներին էլ՝ 300 մ: Էս գումարները մենք օրինակի համար նշանակեցինք, բայց աւելին և պակասը գործի հանգամանքները կցոյց տան:

Կարծիք չկայ, որ էդպիսի ռոճիկներ ստանալով մեր հոգևորականները պարտաւոր կլինին ձրիաբար հովւելու իր ժողովուրդը, թէպէտ ի հարկէ ցանկացողը կարող է առանձին պարգևներ էլ տալ իր տանու քահանային:

Էս տողերը գրելիս մենք ինքներս զգում ենք, որ խնդրի մօտիկ է և կատարելու յարմար էսպիսի առաջարկութիւնը, եթէ միայն ուշադրութիւն դարձնվի սրա վրայ ինչպէս հարկն է: Սրա վրայ ուշադրութիւն դարձնողները և սրանցից աւելի լաւ և յարմար միջոցներ գտնողները և բարեկարգողները. ի հարկէ ուղղակի մեր վիճակաւոր սրբազանները և գլխաւորապէս Էջմիածնի վեհափառ կաթողիկոսը պէտք է լինի:

Սուրբ Էջմիածնի հայրապետական աթոռն ենք ասում, որովհետև նա է մեզ համար մէկ հատիկ պարծանք և մենք նրա համար: Եւ ինչպէս արեգակի լուսաւորեալ ճառագայթները իրանց տված օգուտներովը փառաւորում են նոյն ինքն իրանց աղբիւրը, էնպէս և մենք, եկեղեցու պաշտօնեաներս, իբրև Սուրբ Էջմիածնի ճառագայթներ, կփառաւոր ենք նրան, երբ մանաւանդ նա իբրև զօրեղ արեգակ կհեռացնէ մեզանից իր ձեռքին եկած միջոցներով ամեն տեսակ արգելքները լաւ եկեղեցականներ պատրաստելու և էդպիսով միջոց կտայ մեզ լինիլ նրա օգտաբեր և կենդանացնող ճառագայթներ:

Աստուած տայ, որ մեր նորընտիր կաթողիկոսը, նմանապէս և մեր սրբազան վիճակաւորները ուշք դարձնեն էս առարկային և եթէ մէկ բանով գոնեա պէտք գայ նրանց մեր հիմնական ասածները, էն ժամանակը մենք բոլորովին բաղդաւոր կհամարենք մեզ:

Ղևոնդ երէց Խարազեանց.

ԶԱՆԱԶԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ.

Թիֆլիսեցի Գ. Յ. Թամամշեանցի մահը: Էս ամսի 22-ին մեռաւ Թիֆլիսումը 14-դ կարգի ատրճանաւոր Գէորգ Յովհաննիսեան Թամամշեանցը, որն որ քաղաքիս առաջնակարգ հարուստ հայերից մէկն էր, թողնելով իր ժառանգներին անհագին հարստութիւն.

Թիֆլիսեցի Ա. Ս. Մելիքեանցի մահը: Էս շաբթին վախճանվեցաւ նմանապէս Թիֆլիսումը քաղաքացի Աբրահամ Սիմէօնեան Մելիքեանցը, բաւական հարուստ հայերից մէկը. Ինչպէս լսվում է մեռնելիս, ընծայել է դա Կուկիու նոր շինվող եկեղեցուն 1000 մ. և կտակ է արել Ներսիսեան դպրոցին 500 մ. փող.

Բանկ խեղճերի համար: Կալէչ քաղաքի բնակիչ պ. Կոտը ընծայել է խեղճերի համար բանկ շինելու մտքով 2000 մ. Էդ բանկիցը ամեն լաւ վարք ունեցող խեղճ մարդ կարող է փոխ ուզել մէկ քանի թումանի առանց շահի էն պայմանով, որ էդ պարտքի վճարելու համար շաբաթը 30, 30 կոպեկ տան տանել բանկը.

ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ:

Լիվերպուլ, Նոյեմբերի 5.

Բամբակի առուտուրը օրէցօր թուլանում է. Միջին Ամերիկայի տեսակը մօտ 14 պէնս:

Լօնդոն, Նոյեմբերի 6.

Անգլիայի բանկը ցածացրուց իր դիսկօնտը մինչև 4%:

Պետերբուրգ, Նոյեմբերի 6.

Երկրորդ փոխառութեան լատարեյով պարտքի տոմսակները, որ մինչև սեպտեմբերի 1-ը 13 մլիոնից աւելի էին անծախ մնացել, հիմի բոլորը ծախել են. և ինչպէս կարծիք կայ արտասահմանի բանկիրների վրայ, որոնք աշխատում են հիմի բարձրացնել վեկսիլների կուրսը, որպէս զի Ռուսաստանին փող վերադարձնելու ժամանակը ցած կուրսով յետ տան: Էդ պատճառով էլ այժմեան կուրսի բարձրանալուն ոչով չէ հաւատում:

Կուրսը Լօնդոնի վրայ . 33 պէնս:
Պարիժի վրայ . . 334 սանտիմ.
5% Լատարեյով առաջին փոխառութեան տոմսակները 109½ մանէթ:
—Երկրորդինը բանկումը 107 մանէթ:
Իսկ բիրժայումը . 104 մ. —
Ոսկին . . . . . 6 մ. 20 կ.

Թիֆլիս, Նոյեմբերի 26.

Բամբակը վեր ընկաւ մինչև 7 մ. առուտուրը շատ թոյլ է: Բուրդ առնող չկայ: Փողոցումը փողի պակասութիւն են զգում:

Շաքարը Ֆրանսիայից 10 մ. 10 կ.
— Ռուսինը . . 10 մ. 50 կ.
Արծաթը 84% . 200 մ. —
— 72% . . 50 մ. —
Ոսկին . . . . 6 մ. 45 կ.

ՄԱՍՆԱՒՈՐ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.

Հայոց Վերայի գերեզմանատանը ծախվում է պատուաւոր քաղաքացի Զալ Զալեանցի որբերի Եղիազարի քարաշէն մատուռը: Ցանկացողները կարող են էս բանի համար դառնալ „Վաճառականի" խմբագրատանը:

Ծախվում են Թիֆլիսումը Թուրքի մէյդանի մէջ գտնված նոյն Զալ Զալեանցի որբերի Եղիազարի երկու դուքանը: Ցանկացողները էս գործի հանգամանքն էլ կարող են իմանալ „Վաճառականի" խմբագրատանը:

Дозволено цензурою Ноября 27-го 1866 г.

Հ. ԷՆՖԻՃԵԱՆՑԻ ԵՒ ԸՆԿ. ՏՊԱՐԱՆՈՒՄԸ:

Խմբագրող և հրատարակիչ Գ. Տէր Ալէքսանդրեանց: